ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

---

ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 / Հեռ. 055 40 30 18, էլ. փոստ info_yeghegnadzor@aarhus.am, narekbeg@yahoo.com

*Ե-08/14* *11 օգոստոս*

ՀՀ Մշակույթի նախարար

Հասմիկ Պողոսյանին

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը՝ խնդրում եմ Ձեզ Եղեգնաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

- Ի՞նչ փուլում են գտնվում Արենի 1 քարանձավի հետազոտական աշխատանքները, և երբ է նախատեսված ավարտին հասցնել քարանձավի հետազոտումը:
- Արդյո՞ք քարանձավը բաց է այցելուների համար, քարանձավ մուտք գործելու համար վճարման ինչ սկզբունքներ են սահմանված, որ կազմակերպությունն է իրականացնում քարանձավ այցելուների սպասարկումն ու վճարների հավաքագրումը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող Նարեկ Բեգլարյան